ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ.-ի թվականի մայիսի 25-ից հունիսի 25-ը
Ուզբեկստանի Հանրապետություն (ք. Տաշքենդ)
Գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Սարգիս Մարապանյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի ավագ մաքսային տեսուչ
   Սասուն Մարտիրոսյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչ
   Սմբատ Հովսեփյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչի ժ/թ:
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ուզբեկստանի Հանրապետություն՝ քաղաք Տաշքենդ, 2023թ.-ի մայիսի 25-ից հունիսի 25-ը:
3. **Հրավիրող կողմը.**
   Հրավերը ստացվել է 22.02.2023թ-ին թիվ 15437-2023 գրությամբ՝ ՈՒզբեկստանի Հանրապետության մաքսային ծառայության նախագահի տեղակալ Ն. Մուսամուհամեդովի կողմից:
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Գործուղումը նախատեսված էր շնավարժ-հրահանգիչների 30 օրյա՝ թմրանյութերի և հոգեմետ դեղերի, զենք-զինամթերքի և պայթուցիկ նյութերի, թութունի և թղթադրամների հայտնաբերման թեմաներով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով:
5. **Քննարկված թեմաները.**
   Գործուղման ընթացքում քննարկվել են ստորև ներկայացված թեմաները
   - Շնագիտության հիմունքների հարցերն ու պատասխանները,
   - Շների վարքի և վարժեցման ֆիզոլոգիայի հիմունքները,
   - Շների վարժեցման ընթացքում կիրառվող խթանիչները (գրգռիչները),
   - Պայմանական ռեֆլեքսների զարգացման (մշակման) մեթոդիկան,
   - Շների բարձրագույն նյարդային գործունեության տիպերը,
   - Ծառայողական շների՝ ընդհանուր և հատուկ վարժեցման կուրսերի նախապատրաստման պլանը,
   - Շների աշխատանքը հեշտացնող և բարդացնող պայմանները,
   - Տարբեր տեսակի ծառայությունների համար կիրառվող վարժեցման պիտանի շների ընտրությունը,
   - Հետքաբանություն,
   - Հետքով աշխատանք:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Վերապատրաստման շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Ուզբեկստանի հանրապետության պետական մաքսային կոմիտեի ազգային շնագիտական կենտրոնի պետ Կախխորով Ֆարրուխի և Յալլամայի մաքսային կետի պետի հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են ՀՀ-ում թմրանյութերի և հոգեմետ դեղերի, զենք-զինամթերքի և պայթուցիկ նյութերի, թութունի և թղթադրամների հայտնաբերման ոլորտում զարգացումները, նախատեսվող բարեփոխումները, ինչպես նաև՝ Ուզբեկստանի շնագիտական ազգային կենտրոնի փորձի արդյունավետ կիրառման հնարավորությունները:
7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Քանի որ գործուղումը նախատեսված էր վերապատրաստման դասընթացների և շնավարժ-հրահանգիչի որակավորում ստանալու նպատակով, հետևաբար որևէ նոր որոշում չի ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:
8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**
Գործուղման ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ ՀՀ և ՈՒՀ պետությունների միջև ավելի սերտ համագործակցության, ինչպես նաև՝ շնավարժության ոլորտում աշխատանքների ակտիվացման և բարելավման վերաբերյալ:
9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Սարգիս Մարապանյան

Սասուն Մարտիրոսյան

Սմբատ Հովսեփյան

«26» Հունիսի 2023թ.